XIV—XV ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի գյուղական համայնքի վարչության ու պաշտոնեության, հողային ֆոնդի կատեգորիաների ու նրանց օգտագործման ձևերի, գյուղացիության դասային կազմի և սոցիալ-տնտեսական գոյավիճակի, ինչպես և հարակից մի շարք այլ հարցերի ուսումնասիրության ուղղությամբ մինչ այժմ գրեթե սկիզբ չի արված[1]. Հրապարակված սկզբնաղբյուրները հնարավորություն չեն ընձեռում ուսումնասիրողին ընդհուպ մերձենալու հայ գյուղացիության պատմության հետ առնչվող այդ կարևոր հարցերի լուսաբանման գործին: XIV—XV դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների հավաքմանը զուգընթաց մեզ հաջողվել է ծանոթանալ ըստ մեծի մասին գեռևս անտիպ կալվածագրերի, նվիրարերական արձանագրությունների և նման կարգի այլ փաստաթղթերի հետ, որոնցում կան վերոհիշյալ հարցերի լուսաբանմանը նպաստող ուշագրավ նյութեր ու անսարկներ:

Մեր այս հոդվածով գիտական շրջանառության մեջ ենք գնում այդ նյութերը, խմբավորելով զրանք ըստ կարևոր հարցերի, համոզված լինելով, որ կատարված աշխատանքով նախադրյալներ են ստեղծվում այս ուղղությամբ հետազոտությունները շարունակելու համար:

* * *

«Գյուղական համայնք» գիտական տերմինը միջնադարյան հայկական աղբյուրներում բնականաբար չի հանդիպում: Այդ ինստիտուտի մասին խոսելիս, XIV—XV և ժամանակամերձ դարերի սկզբնաղբյուրները օգտագործում են «ժողովուրդ» տերմինը՝ «ժողովուրդ գեղիս»[2], «ժողովուրդ Շամպայ»[3], «Մալխանի ժողովուրդ»[4], «Ցաղեթու ժողովուրդ»[5] և այլն:

---

[1] *Այս տեսակետից բացառություն է կազմում Պ. Հարությունյանի* „Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века" (Москва, 1954) *աշխատությունը, որի մի հատվածը (էջ 72—86) նվիրված է* XVII—XVIII *դարերի գյուղական համայնքի պատմության ու սոցիալական դասերի մասին աղբյուրներում հանդիպող մի շարք տերմինների (մելիք, տանուտեր, մեծամեծք, ռայիս և այլն) մեկնաբանությանը և համայնքի հետ կապված որոշ հարցերի պարզաբանմանը: Ըստ ամենայնի գնահատելով վաղաժամ հանգուցյալ գիտնականի նատարած զրական աշխատանքը, նրամանակ գտնում ենք, որ դժվար է համաձայնել հեղինակի այն մտքի հետ, ըստ որի* „Танутеры (ресы, кёвха) в деревне были лицами, исполнявшими волю крупного феодала" *(էջ 80), կամ* „Из числа этой верхушки — мецамецков - кедхуда иногда выходили крупные светские и церковные феодалы" *(էջ 78):*

[2] *Պետ. Մատենադարան, ձեռ. № 7991, էջ 237բ:*

[3] *«Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 11:*

[4] *Պետ. Մատենադարան, ձեռ. № 4512, էջ 15ա:*

[5] *Նույն տեղում, ձեռ. № 4961, էջ 1ա:*

Հաճախ, ըստ երևույթին համընդհանուր տերմինի բացակայության հետևանքով, սկզբնաղբյուրներում «ժողովուրդ» տերմինին կից տրվում են լրացուցիչ բացատրականներ՝ «ամենայն ժողովուրդ գեղիս՝ ամեծ և զփոքր, զաղքատ և զհարուստ, զայր և զկին, զծեր և զաղայ»[1] կամ «գեղի տանուտէրքն... և առհասարակ մեծ և փոքր ժողովուրդքն և քահանայքն միաբանութեամբ»[2] և այլն։ Հանդիպում ենք նաև «գիւղականք»[3], «գեղովի ոյնաբան»[4] և համանման այլ արտահայտությունների։

Նույն ժամանակաշրջանի պարսկական աղբյուրներում «գյուղական համայնք» հասկացությունն արտահայտվում է «ջամա'աթ» արաբերեն տերմինով, որը նույնպես բառացի նշանակում է ժողովուրդ։ XVII—XVIII դարերից սկսած «ջամա'աթ»-ը («ջամիաթ» ձևով) մուտք է գործում նաև հայերեն լեզվով գրվող կալվածագրերի ու նվիրաբերական արձանագրությունների մեջ[6]։

Գյուղական համայնքի հետ առնչվող պաշտոնեության մասին ակնարկներ պարունակող սկզբնաղբյուրներում առաջին հերթին հիշատակվում են ձեռնավորները ու տանուտերերը (ռայիսները)։ Այդ պաշտոնյաների գոյությունը անհրաժեշտ էր նկատվում բոլոր գյուղերում։ XIV դարի վերջի և XV դարի սկզբի մատենագիր Մատթեոս Ջուղայեցին «անկարգ շէն» էր համարում այն գյուղը, որ «ոչ ունի ձեռնաւոր և տանուտէր»[7], իսկ նրա ուսուցիչ Գրիգոր Տաթևացին՝ որը այն առնը, «որ չունի տանուտէր... գեղ, որ չունի ձեռնաւոր»[8]։

Այդ պաշտոնյաների իրավասությունները և գործունեության բնագավառները որոշ լուսաբանություն են ստանում վիմագիր ու ձեռագիր աղբյուրների համադրումով։

Ձեռնավոր կոչվող պաշտոնյաներ Հայաստանում կային դեռևս նախամոնղոլական շրջանում։

Աթաբեկ Իվանեի կին Խոշակը 1228 թվականին Շիրակավանի բնակչությանն ազատում է «զապուտ իշի» և «զրսահին բաժ» կոչվող հարկերից, հայտնելով, որ «այս բանիս պատճառ Գաւգէն (կամ Գաւրգէն) եղեւ՝ Ցխատի որդին՝ ձեռնաւորն»[9]։

Մոնղոլական իլխանության գոյության ողջ ընթացքում, ինչպես նաև Կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների տիրապետության ժամանակաշրջանում ձեռնավոր անունով պաշտոնյան շարունակում է հիշատակվել հայկական աղբյուրներում։

1286 թվականին, «Հրամանաւ պարոն Սահմադնի», Սաեփանոս ձեռնա-

---

1 Պետ. Մատենադարան, ձեռ. № 7991, էջ 237բ։

2 «Կալվածագրեր», էջ 11։

3 «Վիմական արեգիր», կազմեց Կ. Կոստանյան, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 51։

4 Պետ. Մատենադարան, ձեռ. № 3850, էջ 26բ։

5 *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI--начале XIX вв., Ленинград, 1949, էջ 73.

6 Տե՛ս օրինակ՝ «Կալվածագրեր», էջ 49. «Զայս եկն ներքոյ գրեալ սէյիրքն, քանդխուաի և ջամիաթի հուզուրումն կոյությեամբն գրեցաւ» կամ «Որ մեք Ամիրդատենց Մէլիքի տան վարիս ջամիաթս» և այլն։

7 «Բնութիւն գործոց առաքելոց», Պետ. Մատենադարան, ձեռ. № 1402, էջ 83բ։

8 Գրիգոր Տաթևացի, Համառօտ լուծմունք Օրաց, Պետ. Մատենադարան, ձեռ. № 1115, էջ 67բ։

9 «Վիմական արեգիր», էջ 71։

վորն ու Վահրամ քեթորարը[1] Օշականի քահանաներին ազատում են բոլոր հարկերից. «թողաք պՅաւշականու քահանայից զինչ հարկ որ կայր»,—գրում են նրանք այդ առթիվ փորագրել տված արձանագրության մեջ[2]։

Թովմա Մեծոբեցին իր «Պատմության» էջերում հանվանե հիշատակում է հայկական քաղաքների ու գյուղերի (Արճեշ, Ասպիսնակ, Ջերիշատ և այլն) մի շարք ձեռնավորների[3], ձեռնավոր է եղել նաև նրա հայր Ստեփանոսը[4]։

Արճեշի ձեռնավոր Հովհաննեսի մասին Թ. Մեծոբեցին ասում է, որ նա «սիրեցեալ եղև յաչս ամենեցուն՝ հաւատացելոցն և անհաւատից», այդ իսկ պատճառով, իբրև «եղին գնա ձեռնաւոր քաղաքին և երկրին հրամանատու»։ Բոլորի կողմից «սիրված» այս պաշտոնյան իր ձեռնավոր դառնալուց 3 տարի հետո Քաջբերունիքի «զսինլքոր, զտառապեալ, զքաղցեալ և զմերկացեալ» ժողովրդին բերել է տալիս Արճեշ և հանձնում մահմեդական իշխողներին, որոնք այդ ընչազուրկ ու քաղցած գյուղացիներից, «զամենայն գլխոյ պահանջէին 540 թանկայ՝ ի կադէ և ի կուրէ, ի ծերոց և ի աղայոց. և այնպիսիք են, որ զրամի միոջ տէր ոչ էին»[5]։

Արձանագրական ու մատենագրական այս վկայություններից պարզ է դառնում, որ ձեռնավորները տեղական ֆեոդալներից կախում ունեցող պաշտոնյաներ են եղել, որոնք իրենց ենթակա շրջաններում կամ գյուղերում հարկադրել են հարկահանման ենթակա օբյեկտները, որոշել հարկի չափը, հսկել հարկահանման գործին։

Սամցխեի աթաբեկության սահմաններում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում կան այսպիսի տողեր. «ի թվ. հայոց ՋՀ. (1521), ի ժամանակս պարոնութեան պարոն Դաւրդաւրին, ի հայրապետութեան տէր Սարգիս կաթողիկոսին և ձեռնաւորութեան մուխթասիբ Մլխամին և Դովլաթիարին, զոր տէր աստուած պարգևեսս պահէ զիւրեանքն»[6]։

Սամցխեի աթաբեկի և հայոց կաթողիկոսի հետ միասին տեղի ձեռնավորների անվանց հիշատակությունն ինքնին վկայում է այն մասին, որ նրանք լայն լիազորություններով օժտված ու հեղինակավոր պաշտոնյաներ էին։

Ուշադրավ է նաև ձեռնավոր Մլհամի մուխթասիբ կոչումը։ Հայտնի է, որ արաբական այդ տերմինը տրվում էր այն պաշտոնյաներին, որոնք ճշտում էին հարկերն ու աուրքերը և հսկում շուկաների վրա։ Իրանագետ ընկ. Հ. Փափազյանը կարծում է, որ ձեռնավոր տերմինի պարսկերեն համանիշը ամին է[7], և այս ենթադրությունը հավանարար ճիշտ է, որովհետև մուհթասիբի և ամինի գործունեության շրջանակները հիմնականում համընկնում են։

Այսպիսով, գալիս ենք այն համոզման, որ ձեռնավորները պաշտոնյաներ էին, որոնք նշանակվելով ֆեոդալների ողորմից՝ տնօրինում էին առանձին շրջ-

---

1 Հ. Մանանդյանի կարծիքով «քեթորար» տերմինը, առնչվելով արաբ. «քաթիբ» բառի հետ՝ քարտուղարի և նոտարի իմաստ ունի (տե՛ս «Բննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Գ, Երևան, 1952, էջ 250)։

2 «Վիմական տարեգիր», էջ 129։

3 Թովմա Մեծոբեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 92, 110—111, 113 և այլն։

4 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Ա, Երևան, 1955, էջ 135։

5 Թ. Մեծոբեցի, էջ 117։

6 Պետ. Մատենադարան, ձեռ. № 7643, էջ 90ա։

7 «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները», պրակ առաջին (ԺԵ—ԺԶ դդ.), կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 104։

ջանների ու գյուղերի հարկահանության գործը։ Ձեռնավոր էին գառնում, բնականաբար, ավյալ շրջանի կամ գյուղի ազդեցիկ, ունևոր և փարթամ ընտանիքների ներկայացուցիչները։

Այժմ գյուղական տանուտերերի — ռայիսների մասին[1]։

Ռայիս կամ ռես տերմինը հայկական աղբյուրներում սկսում է գերակշռել XIII դարից սկսած՝ բռնելով նախկին տանուտեր կամ ավելի հնագույն գեղջկական տերմինների տեղը։ 1211 թվականի մի արձանագրության մեջ կարդում ենք «Աւշականայ ռայիս» Արտաշիրի, իսկ 1224 թվականին՝ Բագարանի ռայիս Վարգի անունները[2]։ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և կալվածագրերի ու նվիրաբերական փաստաթղթերի մեջ ռեսների մասին հիշատակությունները հաշվվում են տասնյակներով։

Ռեսի պաշտոնը, ինչպես ասացինք, ընտրովի էր, և, որոշ տվյալներից դատելով, ընտրությունը կատարվում էր տարին մեկ անգամ[3]։

Մի ձեռագիր ավետարանի գնման մասին 1590 թվականին գրանցված արձանագրության մեջ ասված է, որ «գիրս գրեցաւ ԷՆ տարիս, որ Ամիր-Բաբօն տանուտէր էր»[4], իսկ 1696 թվականի մի հիշատակարանում՝ «գնեցաւ այգիս ըռէս Շաղաւաթի տարին»։

Այս տվյալներից, սակայն, սխալ կլիներ ենթադրել, թե ամեն տարի ընտրվում էին նոր ռեսներ և կամ թե ընտրությունը կատարվում էր այս կամ այն անձնավորության գործարար հատկությունների հաշվառմամբ միայն։ Ընդհակառակը, կան տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ ռեսի պաշտոնը գրավում էին գյուղերի ամենափարթամ ու ազդեցիկ ընտանիքների անդամները, ըստ որում այն ժառանգական դառնալու տենդենց ուներ։

Այսպես, 1537 թվականին ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում խոսք կա ոմն Կարապետ «փոքր տանուտէրի» մասին, որը «վեց ամ

---

[1] Տանուտեր տերմինը նախարարական շրջանից մինչև ուշ միջնադար բազմիցս փոխել է իր բովանդակությունը և միաժամանակ հաճախ գործածվել տարբեր իմաստներով։ XIV—XV և հետագա դարերում տանուտեր էին կոչվում ա) գյուղական համայնքի ընտրովի առաջնորդները — ռայիսները, բ) ունևոր և փարթամ գյուղական դերդաստանների ավագները, որոնք ժամանակակից պարսկաստան, ինչպես նաև հետագա՝ XVII—XIX դարերի հայկական աղբյուրներում կոչվում էին բյուղխուդա և գ) ընդհանրապես բոլոր գյուղական տների ավագ անդամները, որոնց ձեռքում էր կենտրոնացված տվյալ տան (դերդաստանի) տնտեսության դեկավարությունը։ Շփոթություն չստեղծելու համար մեր շարադրանքում գյուղի տանուտեր-գեղջկական տերմինի փոխարեն ամենուրեք գործ ենք ածում ռայիս-ռես տերմինը, բայց տանուտեր ասելով ի նկատի ենք ունեցել բյուղխուդաներին։

[2] «Վիմական տարեգիր», էջ 52 և 68։

[3] Պ. Հարությունյանը իր վերոհիշյալ աշխատության մեջ բերում է որոշ տվյալներ այն մասին, որ հայ մուլքադարներն ու մելիքները XVIII դարում իրենք էին նշանակում իրենց պատկանող գյուղերի ռեսներին և ոտիպում գյուղական համայնքին՝ ենթարկվել իրենց թեկնածուին։ Այսպիսի դեպքեր (դուցե նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում) անշուշտ եղել են, սակայն դժվար է համաձայնել հեղինակի այս եզրակացության հետ, ըստ որի, որպես կանոն «հայ խոշոր ֆեոդալ-մելիքները իրենք էին նշանակում իրենց գյուղերի տանուտերերին» (նշվ. աշխ., էջ 81)։

[4] Տեղեկությունը քաղել ենք Ե. Հալայանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» աշխատության անտիպ մասից, միջնորդությամբ Մ. Տեր-Մովսիսյանի։

տանուտերութիւն արար գեղջա Վաղարշապատու, ի ԻԲ (22) ամաց փոխեցաւ առ Քրիստոս»[1]։

1471 թվականին Խժիշկ գյուղի տանուտեր է եղել ոմն «իմաստուն երիտասարդ» պարոն Վաշօ (կամ Վաղօ), որդի պարոն Մկրտչի[2]։

1498 թվականին Ասպիսնակ գյուղում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում հիշված է «զնոր տանուտէրն գպարոն Ջաջուռն, որ տղայհասակ Ի (20) ամաց ի տանուտերութիւն հաստատեցաւ և է ձեռնատոր գեղիս»[3]։

Այս տվյալները, կարծում ենք, բավարար են ցույց տալու համար, որ գյուղի ռեսների ընտրության ժամանակ մեծ նշանակություն էր արվում թեկնածուի ընչեղությանն ու սոցիալական դիրքին, և այդ պաշտոնը գրավում էին հարուստ ու տգգեցիկ ընտանիքների ներկայացուցիչները նույնիսկ այն դեպքում, երբ նրանք շատ երիտասարդ (16—20 տարեկան) լինելով՝ հազիվ թե կարողանային ինքնուրույն վարել գյուղական համայնքի ներքին բարդ ու դժվարին գործերը։ Նկատենք նաև այն, որ երբեմն միևնույն անձնավորության ձեռքում կենտրոնանում էին և՛ ռեսի, և՛ ձեռնավորի պաշտոնները։

Մեծ էր ռեսների գործունեության շառավիղը։ Նրանց գլխավորությամբ էր կատարվում հողաբաժանությունը, առուների ու ջրանցքների անցկացումն ու մաքրումը[4], ճանապարհների ու կամուրջների պահպանումը, հարևան գյուղական համայնքների միջև ծագած վեճերի հարթումը, հարկերի բաշխումը գյուղական համայնքի մեջ ընդգրկված տների վրա, պետական պաշտոնյաներին հյուրընկալելու պարտավորությունը և այլն։

Ճահաղորդելով իրենց դիրքն ու իշխանությունը, գյուղերի ռեսները հնարավորություն ունեին տարբեր մեքենայություններով օգտվել ի հաշիվ գյուղացիների։ Մատթեոս Ջուղայեցու հաղորդած ուշագրավ մի տվյալից կարելի է եզրակացնել, որ նրանք, հաճախ, գյուղացիների վրա էին բարդում պետությանը կամ կալվածատիրոջը տրվող հարկերի նաև այն մասը, որ պետք է վճարեին իրենց գերդասանները։ Ջուղայեցին «ծածուկ գողերի» շարքն է դասում այդպիսիներին, որոնք «յաղքատս ղրկեն և այնպէս երևեցուցանեն, թէ մեք աւելի տամք և յաղքատացն առեալ տան և գինչս իւրեանց պահեն»[5]։

Դրանցից էր, ըստ երևույթին Մուշ գյուղի Ստեփանոս ռեսը, որը, հավանաբար հանդիպելով գյուղական համայնքի դիմադրությանը, վերացրեց «աղջկան յաղկ» և «շանիգագէ»[6] կոչվող հարկերը և պարտավորվեց մյուս գյուղացիների հետ միասին մասնակցել ինչ-որ հարկի վճարմանը։ Այդ մասին շարա-

---

[1] Ավետարանը պահվել է ժամանակին Երևանի ս. Սարգիս եկեղեցում. նրա նկարագրությունը գտնում ենք Ս. Տեր-Ավետիսյանի կազմած անտիպ ցուցակում (Պատմ. ինստիտուտի արխիվ, գործ 48)։

[2] Տեղեկությունը քաղում ենք Հ. Բարագամի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» անտիպ աշխատությունից, միջնորդությամբ Մ. Տեր-Մովսիսյանի։

[3] Ձեռագիրը գտնվում էր Իրանի Փերիա գավառի Շրշկան գյուղում. նկարագրել է Մ. Տեր-Մովսիսյանը։

[4] Վերը հիշատակված ռես Ամիր-Բարոն, օրինակ, իր տանուտիրության շրջանում, ինչպես հաղորդում է նրան ժամանակակից հիշատակագիրը, «վերի աղբիւր հանեց և վարի առուն Սալթաղբցուցէ ջոկեց»։

[5] Պետ. Մատենադարան, ձեռ. № 2229, էջ 133ա։ Հմմտ. Գր. Տաթևացու հետևյալ տողերի հետ. «Եւ որ առաջնորդ է գեղի և ի գեղջէն ղրկէ՝ բոլոր գեղին լրնր գող», Քարոզիրք, ամառան հատոր, էջ 25։

[6] Ըստ երևույթին պետք է կարդալ «շանակիսաթ», որ նշանակում է՝ ապօրինի պահանջմունք, հարստահարություն։

գրված համաձայնագրում, որը հնագրական տվյալների հիման վրա XV դարից է, գրված է. «Քրիստոս ասուած աւրհնէ զրոէս Սանփանոսն և զիւր որդիքն, որ ողորմեցաւ զեզիս Մթայ, և եթող զաղչկան յաղկն, որ ի զեղստանին և զշանիգագէն և զմեր շարաքի /// (մի բառ անընթեռնելի) բոլսն ի ճետ գեղիս տայ և զտուերանիքն ի վերայ գեղիս չի գնի։ Քրիստոս ասուած զինքն աւրհնէ և զիւր որդիքն և զիւր եղբարքն, և զգեղի տանուտէրք, որ կամակից եղան՝ զէս բագադաթս[1] ի գեղէս ի վեր կալին։ Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն և իւրեանց ծնաւղացն, ամէն։ Ով որ յիրար տայ կամ առնու կամ ի յաւան ձգէ՝ նայ զանէծքն սկայենին առնու...» և այլն[2].

Գյուղական համայնքի պաշտոնեության մասին խոսելիս չպետք է անտեսել նաև գղրին։ Այն փաստը, որ բոլոր գյուղերը իրենց գղիրներն են ունեցել, երևում է Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին (1465—1489) Մատոսանից շրջանի գյուղերից մեկի բնակչության ինչոր վանական հաստատության կողմից ուղղված գրությունից։ Այստեղ գյուղական համայնքի պաշտոնեությունն ու բնակչության սոցիալական կազմը թվարկված է այսպես. «թէ բոնս է ու տանուտէր, թէ գղիր է, թէ հարուստ է և թէ աղքատ...»[3]։

Գղիրը ոեսին ստորադրված պաշտոնյա էր. վերջինիս կարգադրություններն ու հրահանգները նա հաղորդում էր համայնքի անդամներին և, ըստ երևույթին, մասնակցություն ուներ նաև հարկերի ու տուրքերի կամ նրանց մի մասի հավաքման գործին։ Նրա պարտավորությունների մասին կարևոր վկայություն է պահպանված «Խաղալ իմասասիրի Տուսացւոյ ասացեալ վասն բանական հոգոյ գիտութեան» խորագրով միջնադարյան մի գրվածքում։ Այստեղ մարդը նմանեցվում է քաղաքի, իսկ նրա մարմնի անդամները՝ ձեռքը, ոտքը և այլն՝ «գործաւորաց քաղաքի»։ «Որկրամոլութիւն նման է գղրի, որ ժողովէ յամենայնէ զպիտոյս և զհարկ քաղաքին»,—կարդում ենք այդ գրվածքում[4]։ Ճիշտ է, խոսքն այստեղ քաղաքի ու նրա «գործաւորների» մասին է, բայց հաղիվ թե քաղաքի և գյուղի գղիրների պարտավորությունները նկատելիորեն տարբերվեին միմյանցից։

Գյուղական համայնքների տնտեսական ու վարչական կյանքում նշանակալից դեր էին կատարում տանուտերերը՝ տնտեսապես ապահով, ունևոր և ազդեցիկ գերդաստանների ավագները։ Իրենց գերդաստանի ներսում նրանց խոսքը օրենք էր, գործը՝ անառարկելի։ Գրիգոր Տաթևացին Երզ երդոցի իր մեկնության մեջ գրում է. «...այսպէս և տանուտէրք տանց իւրեանց և վերակացուք միարանից, իշխանք երկրի և քահանայք ժողովրդոց»[5], այսինքն՝ ինչպես իշխանները տեր են իրենց երկրի, վանքի առաջնորդները՝ միարանների, քահանաները՝ իրենց հոգևոր հոտի նկատմամբ, այնպես էլ տանուտերերը տեր են իրենց տներին։ Տանուտերերի համաձայնությամբ ու կամքով էր օտարվում գյուղական համայնքին պատկանող այս կամ այն արտն ու արոտավայրը, ամեն պարագայում նրանք էին հանգես գալիս կալվածքների վաճառքի կամ գնման մասին շարադրված փաստաթղթերի վավերացնողների կամ վկաների

[1] Բաղադաթ—նորահնար պահանջմունք, հարկ։
[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 4814, էջ 129ա։
[3] Նույն տեղում, ձեռ. № 9645, էջ 203։
[4] Նույն տեղում, ձեռ. № 1113, էջ 110բ։
[5] Նույն տեղում, ձեռ. № 1264, էջ 432ա։

գերում, նրանք էին, որ պաշտպանում էին գյուղի շահերը հոգատիրոջ կամ պետական պաշտոնեության առջև, մի խոսքով ինչպես ասված է 1462 թվականի մի հիշատակարանի մեջ Մարմետի տանուտերերի մասին, նրանք են, որ «վարեն և ուղղեն խաղաղութեամբ զգեաւոս և պահեն ի յաւել առ ու պահանջողաց զաղքատսրն»[1]։

Մարմետի նման խոշոր բնակավայրում, որ հաճախ կոչվում է գյուղաքաղաք, տանուտերերի քանակն անցնում էր 30-ից։ 1462 թվականի հիշատակարանում հանվանե թվարկվում են նրանք, մեծարվելով «պարոն» տիտղոսով՝ «պարոն Սադաղէն՝ Վարդանայ որդին, պարոն Էղկարշէն՝ Խաչատրու որդին, պարոն Դովլաթշէն՝ Մաղթումի որդին, պարոն Գուոջիրլէկն՝ Թաթարի որդին, պարոն Սարգիսն՝ Բիաղտի որդին, պարոն Մկրտիչն՝ Սաղաթիայ որդին» և 25 այլ տանուտեր «պարոններ»։

Հիշատակագիրը բաղձանք է հայտնում, որ այս տանուտերերի որդիները մեծանան, «ի չափ հասակի հասնեն և զառնս հաւր իւրեանց և զգեաւոս ի շէն պահեն»։ Տեղեկություն ունենք այն մասին, որ հիշատակագրի բաղձանքը մասամբ իրագործվել է։ Վերը թվարկված տանուտեր պարոններից երկրորդի՝ Էղկարշահի կամ Էդգարի որդի Բաթաթարը 1510 թվականին հիշատակվում է որպես «զՎանայ քաղաքի և երկրի մելիք»։ Սրան հաջողվում է Շահ-Իսմայլից ստանալ հատուկ հրովարտակ և փրկել Վանի պաշարված բնակչությունը «կատմիրզլուի» (զզլրաշ) Բերամ-բեկի զորքերի կոտորածից ու գերությունից։ Այս դեպքը պատմող հիշատակարանի մեջ թվարկված են Ներքին-Մարմետի վերոհիշյալ տանուտերերի՝ 1510 թվականին ապրող ժառանգները՝ «զգեօղի տանուտերաքն՝ զմելիք Բախտարն և զլուս Սաղդաթիարն, զթամզոչի Մուսեխն, զԼասումն, զԱրապշէն, զՂօչասարն, զԽօշնադարն..., զՍիրադան, զՔամալն, զնաւասարդն, և զԳուլամիրն և զայլ ամենայն»։ Սրանք իրոստանում են տարին 20 բեռ ձուկ տալ սուրբ Կարապետի վանքին[2]։

Փոքր գյուղերում, բնականաբար, ընչեղ ու ազդեցիկ տանուտերերը մեծ թիվ չէին կազմում։ 1474 թվականի մի հիշատակարանում Մատղավանք գյուղի (Արճեշի շրջանում) ազդեցիկ տարրիկ թվարկված են այսպես. «...եւ սուրհնեսցէ զտանուտէր և զառաջնորդ գեղիս՝ զէս Աւետշէն՝ իւր ծաղկեալ որդովքն, զպարոն Սուլթանշէն՝ իւր զաւակօքն, զՅոհանէսն՝ իւր որդովքն, զԴանաբէկն՝ իւր զաւակաւքն, և զայլ ամենայն ժողովուրդք գեղիս՝ զմեծ և զփոքր, զաղքատ և զհարուստ, զայր և զկին, զծեր և զաղայ»[3]։

Նույն պատկերն ենք տեսնում նաև Մուղնի գյուղում, 1491 թվականին։ Այստեղ շարադրված մի հիշատակարանի մեջ հանվանե նշված ենք գտնում միայն 4 տանուտերերի անուններ. «եւ զտանուտէրքս գեղիս՝ զՇահապիզ, զիրաւնա Մովսէս, զՍատաղէն, զեղտանաբաշխն»[4]։

Այս և նման բազմաթիվ հիշատակարաններում նշվում են միայն գյուղի ունևոր և ազդեցիկ, ուստի և համայնքի կյանքում նշանակալից դեր կատարած գերդաստանների տանուտերերի անունները։ Ուստի դժվար չէ եզրակացնել, որ գյուղական համայնքների մյուս գերդաստանների ավագները, որոնք նույնպի-

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 4883, էջ 614բ։
[2] Նույն տեղում, ձեռ. № 4869, էջ 669բ։
[3] Նույն տեղում, ձեռ. № 7991, էջ 237բ։
[4] Նույն տեղում, ձեռ. № 6293, էջ 461բ։

սի «տանուտերեր» էին իրենց ընտանիքներում, էական դեր չէին կատարում համայնքի ներքին կյանքում և գյուղական տանուտերերի անվանական թվարկման ժամանակ անտեսվում էին, մտնելով սոսկ «այլ ամենայն ժողովուրդք գեղիս», կամ «շինականք», կամ «հողագործք» հավաքական տերմինների տակ[1]։

Գյուղական ազդեցիկ տանուտերերին մյուս գերդաստանների ավագներից տարբերելու համար, երբեմն առաջինների նկատմամբ գործ է ածվում «գլխավոր տանուտեր» տերմինը։ Մելիքսեթ և Կարապետ ջանեցիների վկայաբանության մեջ (նահատակվել են 1403 թ.), օրինակ, գտնում ենք այսպիսի տողեր. «Եւ կալեալ ութ հոգի՝ կրակեցին և զմինն ի գլխաւոր տանուտէրացն՝ հարեալ խոցեցին ի գլուխն և ի կուշան սրով»[2]։

Նույն ժամանակաշրջանի պարսկալեզու աղբյուրներում, նույնիսկ երբ նրանք վերաբերում են հայկական շրջաններին ու գյուղերին, «տանուտեր» տերմինի դիմաց ամենուրեք հանդիպում ենք պարսկական «քյադխուդա» տերմինին[3]։ «Քյադխուդա»-ն XVII դարից սկսած լայնորեն սկսում է կիրառվել նաև հայալեզու աղբյուրներում։ Այսպես օրինակ, 1660 թվականի պաշտոնական մի գրության մեջ կարդում ենք. «Ընծնարերթու... բոլոր քանդխուտայքս՝ տանուտէր Այվազս, երեսփոխան Փերիջանս, քանդխուտայ Ներսէսս, ես՝ քանդխուտայ Յովանէսս, ես Փիլիպոսս և այլ մեծ և փոքր ժողովուրդս»[4]։ Հաճախ էլ նույն իմաստով գործածվում է «դովլաթաւորք» տերմինը, որով, առավել պարզությամբ, նշվում է գյուղական այդ տանուտերերի ընչեղությունն ու տնտեսական կշիռը[5]։

Չնայած սոցիալական ու տնտեսական հողի վրա գյուղական համայնքի ներսում առաջացած շերտավորմանը, որի մասին դեռևս ուրիշ կունենանք խոսելու, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում համայնքի տնտեսական ու իրավական հիմքերը դեռևս բավարար չափով ամուր էին, և համայնքը միասնական ուժերով կարողանում էր դիմագրավել հողաբաժանման ենթակա վարելահողերի, խոտհարքների ու արոտավայրերի բռնազրավման փորձերին, լինեին

---

[1] Զաքարիա կաթողիկոսի ձեռագիր մի կոնդակի մեջ, որն ուղղված էր եկեղեցական թեմերից մեկի բոլոր բնակիչներին, ժողովրդի դասային կազմը բացահայտված է այսպես. «Եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք, ռաւիսք, տանուտէրք, արուեստաւորք և հողագործք՝ մեծ և փոքր»։ Ինչպես տեսնում ենք, այստեղ էս արհեստավորներն ու հողագործները սշված են տանուտերերից հետո, որպես նրանցից դածր սոցիալական դասեր։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև կոնդակի շարունակության սկզբի հատվածը։ Զաքարիա կաթողիկոսը ինքնագովությամբ ասելիս է, որ Ջհանշահից ստանալով Էջմիածնի կաթողիկոսությունը, եկել է Էջմիածին և Այրարատյան գավառում մեծ կառուցումներ կատարել, գրանից հետո՝ «զինչ պաա(ուա)կան եպիսկոպոսք և վարդապետք, ազատորդիք և երեւելի տան(ու)տէրք՝ ամենեքեան ի յաթոռս ժողովեցան և մեծ սիրով ընկալան զմեզ և հնազանդեցան» (տե՛ս պահպանակ Պետ. Մատենադարանի № 4779 ձեռագրի)։

Էջմիածնում գումարված այս ժողովի մասնակիցների շարքում հիշատակված «երեւելի տանուտէրք»-ը գյուղական ազդեցիկ և հարուստ բնակիչների ավագներն էին անշուշտ, որոնք միջանկյալ դիրք էին գրավում «ազատորդիների» ու «արուեստաւորների և հողագործների» միջև։

[2] Հ. Մանանդյան և Հ. Անտոյան. Հայոց նոր վկաները, գիտ. հրատ., էջ 200։

[3] «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները», էջ 43, 45, 47, 50 և այլն։

[4] «Կայվածագրեր», էջ 19։

[5] Նույն տեղում, էջ 123։

դրանք ֆեոդալ-հողատերերի, պետական պաշտոնյաների, թե վանական հաստատությունների կողմից։ Գյուղական համայնքն ամենուրեք հանդես էր գալիս որպես տվյալ գյուղի հողային ֆոնդի հիմնական մասի տնօրինող։ Համայնքի իրավասության տակ գտնվող վարելահողերն ու արոտավայրերը դիտվում էին որպես համայնքային հողի անկապտելի մաս, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դեպքում ում ձեռքումն էր գտնվում նրանց օգտագործման իրավունքը։

Որևէ հողամասի օգտագործման իրավունքի օտարման ժամանակ, ամեն պարագայում պահանջվում էր գյուղական համայնքի միաձայնական կամքն ու համաձայնությունը։

Բերենք մի բնորոշ փաստ. 1445 թվականին (կամ մի քանի տասնամյակ դրանից հետո) կազմված նվիրաբերական մի արձանագրության մեջ ասված է. «Քրիստոս աստուած պահէ զքահանայս և զտանուտէր և զոտյիս զեղջիս Աղուայ՝ զմեծ և զփոքր առհասարակ, որք կամեցան և զսուրբ Ովաննէսն շինեցին վանք, որ ի վաղուց ժամանակէ հասկել էր»։ Աղու գյուղի համայնքը, հանդես գալով միասնաբար, տնտեսական իր միջոցներով վերաշինում է սուրբ Հովհաննեսի վանքը և իր հողային ֆոնդից վանքին «լուսագին» է տալիս մի արտ[1]։

XVI դարի անթվական նվիրաբերական մի փաստաթղթի մեջ նույնպիսի տվյալ կա Ռշտունիքի Գանձակ գյուղի մասին. «Աստուած օրհնէ զԳանձակ գեղ,—ասված է այնտեղ,—որ միարան մի խորհուրդ եղեն և տուին զԹոտակիսի գերեզմանաց արտն անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց և ննջեցելոց»[2]։

Զաքարիա կաթողիկոսի կենդանության օրոք (մհ. 1464 թ.), Աթանանց գյուղի համայնքը ստիպված է եղել իր վրա դրված անեծքի թուղթը օրհնանքի վերածելու համար իր հողային ֆոնդից մի արտ նվիրաբերել սուրբ Աստվածածնի վանքին։ Այս կապակցությամբ շարադրված արձանագրության մեջ թվարկված են գյուղի ոչ Բաղշայիշը և 13 «աստուածասէր տանուտէրքը», որոնք «ամենեքեան վառեցան ի սէրն Քրիստոսի և ի սուրբ Աստուածածինն և զայն արան խաղ ու մուլք արին Աստուածածնին»[3]։

Կարելի է մեջ բերել այս կարգի տասնյակ այլ փաստաթղթեր, որոնք բոլորն էլ միաբերան վկայում են այն մասին, որ գյուղական համայնքի տնօրինության տակ գտնվող հողային ֆոնդից որևէ արտ օտարելու կամ նվիրաբերելու համար պահանջվում էր տվյալ համայնքի բոլոր անդամների համաձայնությունը։

Գյուղական համայնքը հաճախ հանդես է գալիս նաև որպես շարժական գույքի կոլեկտիվ սեփականատեր։

1469 թվականին Խիզանի շրջանի Սուր գյուղի տանուտերերից մեկը մի ավետարան է նվիրում իր հայրենի գյուղին և պատվիրում, որ «մի ոք իշխեսցէ զսա իւրն սեփականել քահանայ կամ տանուտէր, այլ գեղացուն ամէնքն ինամ տանեն ի վերա և պահեն, զի աւետարանս զեղին եմ տուեր»[4]։

---

[1] Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ., Կ. Պոլիս, 1885, էջ 306–307։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 4868, էջ 321բ։

[3] Նույն տեղում, ձեռ. № 5512, էջ 1ա։

[4] «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», գրեց Երվանդ Լալայան, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, սյուն. 453–456։ Հմմտ. նաև Պետ. Մատենադարան, ձեռ. № 6348, Հովհան Ավետարանչի պատկերի վերին մասում գրված հիշատակագրության հետ։

Այս տվյալները, սակայն, բնավ չեն խոսում այն մասին, որ որևէ գյուղի սահմանների մեջ գտնվող բոլոր հողերը, անխտիր, գտնվում էին գյուղական համայնքի իրավասության ներքո։ Ընդհակառակը, կան տվյալներ, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, թե գյուղերի հողային տարածությունները ստորաբաժանված էին արդեն մի շարք ենթախմբերի (համայնքի տնօրինության տակ գտնվող վարելահողեր և արոտավայրեր, մասնավոր սեփականություն դարձած հողեր, գյուղացիների կողմից սեփականված հողեր, վանական հասատությունների կողմից օգտագործվող կամ նրանց սեփականություն դարձած հողեր և անմշակ ու խոպան հողային տարածություններ)։

Բնականաբար, ամենածավալուն խմբի մեջ մտնում էին այն վարելահողերն ու արոտավայրերը, որոնք գյուղական համայնքին պատկանող հողային հիմնական ֆոնդը լինելով, պարբերաբար՝ մեկ կամ մի քանի տարին մեկ անգամ (նայած ավյալ շրջանում գոյություն ունեցող սովորույթին կամ համայնքի անդամների մեծամասնության պահանջին)՝ բաժանվում էին գյուղական համայնքի լիիրավ ընտանիքների միջև։

Համայնքային հողերի պարբերաբար կրկնվող հողաբաժանումների մասին Հայաստանի տարբեր շրջաններից ունենք բազմաթիվ վկայություններ XIX դարի վերաբերյալ[1]։ Որ այդպիսի հողաբաժանումներ եղել են նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, այդ մասին կարելի է դատել ոչ միայն հետագա դարերի տվյալների քննության ու վերլուծության ճանապարհով, այլև հենվելով XIV—XVI դարերի աղբյուրներում պատահականորեն գրանցված մի-երկու ոչ ուղղակի վկայությունների վրա։

Ծանոթանանք դրանց։ XIV դարի նշանավոր իմաստասեր Հովհան Որոտնեցին (մհ. 1386 թ.), իր «Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի» աշխատության մեջ, «բաժանական հասարակութիւն» հասկացությունը բացահայտելու համար օրինակ է բերում նաև գյուղերի վարելահողերը («անդաստան գեղից»), դրանով իսկ հավաստելով, որ նրանք ենթակա են եղել բաժանումների[2]։

XVI դարի մի փաստաթղթի տվյալներով, Ռշտունիքի Բեսավենք գյուղի տանուտերերը միարան պարտավորվել են սուրբ Գեորգի վանքին ամեն տարի տալ «ամէն բաժին կէս կասիճ ցորեն սերմ»[3]։ Ամենայն հավանականությամբ, այստեղ «բաժին» տերմինի տակ պետք է հասկանալ այն հողաբաժինները, որոնք համայնքի կողմից տրված են եղել օգտագործման բազմանկամ ընտանիքների և կամ սակավաշունչ մի քանի ընտանիքներից կազմված ժամանակավոր խմբերի՝ հողաբաժանման համփա-չարեքային սկզբունքով։ Որ վերոհիշյալ պարտավորությունը սահանձնած «բաժնի» տերերը հավասար քանակությամբ հող են ունեցել, այդ երևում է այն բանից, որ նրանցից յուրաքանչյու-

---

[1] Այս մասին արժեքավոր տվյալներ է մեջ բերում գյուղական համայնքի մասին գրած իր ուշագրավ աշխատության մեջ պրոֆ. Ս. Եղիազարովը (տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказье, часть I, Сельская община, Казань, 1889).

[2] Յովհան Որոտնեցի, Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի, Երևան, 1956, էջ 6։ Ստորև բերում ենք աշխատության մեջ հետաքրքրող հատվածը. «Հասարակութիւնն է ըստ չորս եղանակն... երկրորդ՝ է բաժանականն, որպէս կերակուր հասարակաց և անդաստան գեղից»։

[3] Պետ. Մատենադարան, ձեռ. № 9223, ԺԻ, էջ 1բ։

որ պարտավորվում է վանքին տալ հավասար քանակությամբ (կես կապիճ) ցորեն։

Ըստ ինքյան հասկանալի է, որ կրկնվող հողաբաժանումների դեպքում միայն գյուղական ընտանիքները կարող էին ըստ շնչաքանակի հավասարաչափ հողաբաժին ունենալ։

Կարծում ենք, սխալ գործած չենք լինի, եթե XIX դարում Հայաստանի բազմաթիվ շրջաններում կիրառվող համփա-չարեքային հողաբաժանության ձևը համարենք հատուկ նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին։ Թվում է, թե դրա համար ունենք նաև բավարար կռվան։ Պահպանվել է Ռշտունիքի Գանձակ գյուղում շարադրված նվիրաբերական մի արձանագրություն, որի կարևոր մասում ասված է. «Աստուած օրհնէ զԳանձակ գեղ, որ միաբան մի խորհուրդ եղեն և տուին զՌստակիսի գերեզմանաց արան անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց և ննջեցելոց, եթէ մելիք, եթէ համբայ, եթէ մեծ, եթէ փոքր՝ ամենեքեան տուին»[1]։

Դժվար չէ համոզվել, որ այստեղ գործածված «համբայ» տերմինը ըստ իմաստի, համապատասխանում է նման կարգի նվիրաբերական ակտերի մեջ բազմիցս գործածված «տանուտեր» (կամ «քյադխուդա», «դողվաթաւոր») տերմինին։ Եվ հենց այն հանգամանքը, որ «տանուտեր»-ը հնարավոր են համարել փոխարինելու «համբայ»-ով, ըստ ինքյան ենթադրել է տալիս համփա-չարեքային հողաբաժանման սկզբունքի տարածված լինելը նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում։ Հողաբաժանման այդ ձևի կիրառման ժամանակ բազմամարդ գերդաստանները, բավարարելով ամբողջական հողաբաժին ստանալու համար անհրաժեշտ շնչաքանակի նորման (16 հոգի) կամ գերազանցելով այն՝ ստանում էին մեկ լրիվ, երբեմն մի քանի հողաբաժիններ։

Գյուղական համայնքի հողային ֆոնդից ստանալով մեկ կամ մի քանի ամբողջական բաժին վարելահողեր, ունենալով անհրաժեշտ քանակությամբ բաշող անասուններ ու գյուղատնտեսական գործիքներ, ինչպես նաև ապահովված լինելով աշխատավոր ձեռքերով, ազդեցիկ տանուտերերի կամ համփաների գերդաստանները, ինչպես արդեն ասացինք, գյուղերում մեծ ազդեցություն ու կշիռ ունեին և, ինչպես կտեսնենք ստորև, տնտեսապես կախման վիճակի մեջ էին պահում չքավոր համագյուղացիներին։ Ուստի հասկանալի է, թե ինչու հայ գյուղացու խոսակցական լեզվում «համփա» բառը պետք է ստանար նաև «ունևոր դասին պատկանող անձ» նշանակությունը[2]։

Ձեռագրերի հիշատակարաններում բազմիցս հանդիպում ենք այդպիսի տանուտերերի կամ համփաների, որոնք տնտեսապես ապահով լինելով, հնարավորություն էին ունենում հանդես գալու որպես մեծադին ձեռագրերի պատվիրատուներ ու դնորդներ։ Հիշատակարաններից շատերի մեջ թվարկված են

---

[1] Գնա. Մատենադարան, ձեռ. № 4868, էջ 321բ։

[2] Տե՛ս Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, III, էջ 35։ Համփա տերմինի նշանակության մասին հիշատակության արժանի տվյալ է հաղորդում հայ գյուղացու արտադրական կենցաղի լավագույն ուսումնասիրողներից մեկը՝ Ս. Զելինսկին, նա գրում է. „Слово „ампа“ употребляется как в смысле почета, знаменитости или древности, так и в смысле отвлеченной единицы платежной способности... Название это присваивают себе отдельные семейства, пользующиеся большим количеством земли и платящие, поэтому, больше оброка“ (см. „Материалы для изучения экономического быта гос. крестьян Закавказского края“, т. I, вып. I, Тифлис. 1885, էջ 20—21)։

այդ տանուտերերի բազմաքանակ «արեան մերձաւորներր»։ Մեծ մասամբ հնարավորություն չի լինում պարզելու, թե նույն հարկի առ՞կ են ապրել արդյոք արյունակից այդ ազգականներր, թե՞ զատ-զատ ընտանիքներով, սակայն որոշ դեպքերում հիշատակարաններն ընձեռում են այդպիսի հնարավորություն։

Այսպես, օրինակ, 1462 թվականին, որպես Աղթամարում ընդօրինակված մի ավետարանի ստացողներ, հիշվում են Գիշուկ և Շամշա ամուսինների 5 արու զավակներր՝ Սարդիս, Խաչատուր, տեր Ավագ, Ստեփանոս, Հովհաննես։ Այնուհետև թվարկվում են այդ եղբայրների կանայք, որդիներն ու թոռներր, ընդամենր 66 անուն[1]։ Կարծում ենք, որ բազմասերունգ այս եղբայրներր միասնաբար մի ձեռագիր կարող էին ստանալ այն դեպքում միայն, եթե կազմեին մի մեծ դերդաստան, ապրեին մի հարկի տակ։

XV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններից շատերի մեջ տվյալներ կան ազգակցական նույն սկզբունքներով կազմված բազմանդամ գերդաստանների մասին, որոնք իրենց կազմում հաճախ ունենում էին 19,17 կամ 16 անդամներ[2]։

Բազմամարդ ու մեծ դերդաստանների գոյությունր մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հավաստվում է նաև այլ ազբյուրներով։ Թովմա Մեծոբեցին, օրինակ, հաղորդում է, որ Շահհուվխի 1430 թվականի արշավանքի ժամանակ Քաջբերունյաց դավառի Մաջառուաց գյուղից «ի միոջէ տանէ» գերվեցին 10 հոգի[3]։ Պետք է ենթադրել, անշուշտ, որ 10 հոգի գերի տված ընտանիքի անդամների թիվր, առնվազն, կրկնակի անդամ մեծ էր։ Շատ ավելի ուշադրրավ է բազմանդամ գերդաստանների մասին Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» մեջ բերված տվյալր, որր սակայն վերաբերում է XVII դարի սկզբին և միայն Խարբերդի ու Սեբաստիայի շրջաններին։ Խարբերդի մասին լեհահայ հեղինակը զարմանքով արձանագրում է հետևյալր. «Եւ անդ ես մեծամեծ տներ էին, որպէս Սեւրստու։ Անդ տեսաք մէկ տունն քառասուն օրոցք. և ամէնքն հոր հնազանդ. և թէ հայրն մեռանէր՝ մեծ եղբօրն հնազանդէին. և այսպէս մեծ սէր և միաբանութիւն մեծ տեսաք երկիրն այն, զոր այլ տեղ երկու եղբարք կամ երկու քոյրք ոչ կարեն ի միասին բնակել ի միում տան»[4]։

Գյուղական համայնքի բոլոր անդամներին պատկանող ու պարբերաբար հողաբաժանման ենթակա հողային ֆոնդից զատ, գյուղերում կային նաև այս կամ այն ընտանիքի կողմից սեփականված կամ սեփականություն դառնալու ընթացքի մեջ մտած հողակտորներ։

Գրիգոր Տաթևացին իր Քարոզներից մեկում, անշուշտ, նկատի ունենալով իր միջավայրում ամրակայացած սովորությային իրավունքի նորմերր, հաղորդում է ուշադրավ տվյալ այն մասին, որ «զանդատանս ինչ յորժամ ի բազում ամս կալնու ոք՝ հայրենիք լինի նմա»[5]։

Գրիգոր Տաթևացու հաղորդած այս տեղեկությունր կարևոր նշանակություն ունի։ Համայնքի ապրնցիկ և ունևոր տանուտերերր, օգտագործելով

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 7632, էջ 320ա—321ա։

[2] Տե՛ս նույն տեղում, ձեռ. № 4768, էջ 350ա, ձեռ. № 4883, էջ 613բ—614ա, Նոր Ջուղա, ձեռ. № 28, էջ 341բ—343բ (միջնորդությամբ Ս. Տեր-Ավետիսյանի) և այլն։

[3] Թովմա Մեծոբենցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 92։

[4] «Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 157—158։

[5] Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի ձմռան տաւոր, Կ. Պոլիս, 1740, էջ 593։

իրենց կշիռն ու հեղինակությունը, առանց մեծ արգելքների ի վիճակի էին իրենց գերդաստանների կողմից մշակվող այս կամ այն արտը նոր հողաբաժանումների ժամանակ կրկին ու կրկին անգամ պահել իրենց ձեռքում և, ի վերջո, «պարսպով և նշանիւ սահման դնելով»[1] հանել գյուղական համայնքի բաժանման ենթակա հողային ֆոնդից։

Պետք է ենթադրել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գյուղական համայնքի հողային ֆոնդի որոշ մասն արդեն, հիշյալ ճանապարհով ամրացված լինելով այս կամ այն գերդաստանին, «հայրենիք» դառնալու ընթացքի մեջ էր մտել։

1470 թվականին Աղթամարում շարադրված նվիրաբերական մի արձանագրության մեջ թվարկված են Արբերդ գյուղի արտերից մի քանիսի անունները. դրանք են՝ Ճիականց արտ, Ներկարարենց արտ, Ուշրդի արտ[2]։ XV—XVI դարի անթվական մի փաստաթղթի համաձայն Աթանանց գյուղի տանուտերերի կամքով Վաղպատրիկի վանքը նվեր է ստանում վեց արտ՝ «զԽաչի արտն, ու զՇուտ արան, ու զՈւռուտն, ու Շապխոնց քոէն, ու Զաւգերոնց արան, ու Զաւգերոնց Թումի արտն»։ Կա տվյալ այն մասին, որ ոմն տեր Ներսես սուրբ Աստվածածնի վանքին է նվիրում Բաղեշից ոչ հեռու գտնվող Մարգար գյուղի «պղնձագործ Մախսուտի արտերն, զմահտեսի Մուրատի արտն», ինչպես նաև երկու ձեռագիր ու մի արծաթի սկիհ[4]։

Բերված փաստերն ուշագրավ են այն առումով, որ նվիրաբերվող արտերի մեծագույն մասը կոչվում է այս կամ այն անձնավորության կամ գերդաստանի անուն-ազգանունով (Ճիտկանց, Շապխոնց, Զավգերոնց, պղնձագործ Մախսուտի, մահտեսի Մուրատի և այլն)։ Պետք է ենթադրել, որ վերոհիշյալ արտերը բոլորը կողմից ճանաչված իրենց անունները սացել են շնորհիվ այն բանի, որ գյուղական տվյալ գերդաստանը կամ տանուտերը միևնույն արտը մշակել է «բազում ամս»,— ինչպես կասեր Գրիգոր Տաթևացին։

Համայնքապատկան հողերի մի մասի սեփականման պրոցեսը Հայաստանում սկսել էր դարեր առաջ, ուստի համայնքի մեջ ընդգրկված փարթամ գերդաստաններից շատերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տիրում էին արդեն զգալի քանակությամբ այգիների, վարելահողերի և այլ կալվածքների։

Համայնքը այլևս իրավասու չէր միջամտելու դրանց տնօրինմանը, և յուրաքանչյուր «հայրենատեր» կարող էր անարգել նվիրաբերել, վաճառել կամ մի այլ ձևով օտարել իրեն պատկանող կալվածքը։

Մերձավոր ազգականների համաձայնությունը, սակայն, այդ դեպքում պարտադիր էր։ Նույնիսկ, երբ գերդաստանը բաժանված էր առանձին ընտանիքների, նախկինում ողջ գերդաստանին պատկանող վաճառված կամ այլ ճանապարհով օտարված այս կամ այն կալվածքը ենթակա էր հետ գնման, եթե մերձավոր ազգականներից որևէ մեկը համաձայն չէր օտարման այդ գործարքին։ Գր. Տաթևացին այս կապակցությամբ գրում է. «Եւ որ կամի զհայրե-

---

[1] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 298։
[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 8928, էջ 289ա—289բ։
[3] Նույն աեղում, ձեռ. № 6324, էջ 305ա։
[4] Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Բ, էջ 257։

նիս աղքատին յետ գնել՝ պիտոյ է... նախ, որ լինի ազգական նմա, զի օտարն ոչ կարէ գնել»[1]։

Ազգականների հետագա միջամտությունից վանական որևէ հասատաության նվիրաբերված կալվածքները զերծ պահելու մտահոգությամբ, նվիրաբերական արձանագրությունների մեջ հաճախ շեշտում էին այն հանգամանքը, որ ազգականներից և ոչ մեկը իրավունք չունի երբևէ վեճ բացելու տվյալ նվիրաբերության առթիվ. համարձակվողների հասցեին ուղղվում էին անեծքի սարսուռ ազդող խոսքեր։ Այսպես, օրինակ, 1489 թվականին ոմն Դավիթ երեց Արտամետի Կորնկեց սուրբ Աստվածածնի վանքին նվիրաբերել էր իր ողջ ունեցվածքը՝ անշարժ ու շարժական կալվածքներ։ Այդ մասին շարադրված հիշատակարանի վերջում Դավիթ երեցը գրանցել է այսպիսի աղոթք. «Ով որ հակառակէ յետ իմ անցման, կամ դաւէ անէ, կամ դալապ անէ մազի մի չափ, թէ ազգ է, թէ աղբօր զարմ է, թէ հօրեղբօր զարմ է՝ դաւէ և տալապ անէ, եկեղեցոյ ֆարղիանդէն հանէ և ցրէ, նա զանէծքն օձին և զկայենին, զՅուդային և զնեռան առցէ, ամէն»[2]։

Համայնքը, սակայն, վերստանում էր սեփականություն դարձած վարելահողերի, այգիների և այլ կալվածքների տնօրինման իրավունքը այն դեպքում, երբ դրանց սեփականատերերը վախճանվում էին՝ չթողնելով մերձավոր ժառանգներ[3]։

Սեփականություն հանդիսացող կալվածքների օտարման մասին պահպանված արձանագրությունները զգալի թիվ են կազմում։ Ծանոթանանք այդ կարգի մի-երկու փաստաթղթերի հետ։

1474 թվականին (՞) ոմն տեր Հովհաննես իր «մայրենի» (այսինքն՝ մորից ժառանգություն ստացած) այգին նվիրաբերում է Արարուց սուրբ Նախավկայի վանքին, հատուկ շեշտելով, որ տվյալ նվիրաբերությունը անդարձ է և «ոչ ում դաւէ չի լինի, ոչ եղբաւր, ոչ եղբաւրորդոյ, ոչ աղգի և ոչ աւտարի, ոչ որդոյ և ոչ թոռան»[4]։

1465—1489 թվականներին ոմն Ստեփանոս Հերենբսի որդի, Հայոց-ձորի Կեմ գյուղի ասնուաերերի կամքով Պուտուկի վանքին է նվիրում իր «հերենական գնած մուլքն՝ զԹոս արտն»։ Նվիրաբերության պայմանն այն է, որ «զինչ երէց որ եկեղեցոյն ծառայութիւն առնէ՝ զեն արտի բերքն այն ուտէ, և ի տարին հինգ անդամ զՀերենբսենց գերեղմաներն օրհնէ»[5]։

Որոշ գյուղերում «հայրենիք» կամ «մուլք» կոչվող կալվածքներն այնքան ընդարձակ սարածություն էին բռնում, որ գյուղի հողային ֆոնդը երկփեղկվել էր համայնքային և մլքային բաժիններին։ Այսպես էր, օրինակ, Քարվակ

---

[1] Գիրք ջարոզութեան, որ կոչի ձմռան հատոր, էջ 86։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 5537, էջ 298ա։

[3] Այս մասին XIV—XV դարերից տվյալներ չեն պահպանվել, սակայն հետագա դարերում կիրառվող պրակտիկան օրենքի ուժ էր ստացել, անտարակույս, դարավոր արդիցիայի ուժով։ Հայտնի է, օրինակ, որ 1747 թվականին «Երևանայ Գ. (3) եկեղեցու եղեալ ժողովրդի» կողմից լիազորված տանուտերերը իրենց հայեցողությամբ տնօրինել են անժառանգ մահացած ոմն Մատթեոսի Նորագեղում գտնվող այգին (տե՛ս «Կալվածագրեր», էջ 85)։

[4] Պետ. Մատենադարան, ձեռ. № 9093, էջ 435բ։

[5] Ղ. Փիրղալեմյան, Նշխարք պատ. հայոց, Բ, Պետ. Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 229—230։

գյուղում, որտեղ կար հատուկ «մլքի դաշտ»։ Այդ դաշտում դանվող իր «հալալ մուլքը» XVI դարում ումն Թերձակենց Թումա նվիրաբերեց Ժաժկանց սուրբ ավետարանին[1]։

Գյուղերի սահմաններում կային նաև ընդարձակ տարածություն բռնող ապառաժ, անջրդի, ճահճային կամ մի այլ պատճառով երկրագործության համար ոչ պիտանի հողեր։ Դրանք կարող էին դառնալ այս կամ այն դերդաստանի սեփականություններ, եթե նրանք միջոցներ ներդնելով ու ջանքեր գործադրելով կարողանային օգտագործելի դարձնել այդ հողերը։

1507 թվականին ընդօրինակված մի ավետարանի մեջ կա հետաքրքրական մի դրանցում. ումն Ստեփանոս ինչ-որ սուրբ Կիրակոսի վանքի նվիրում է դանձագին մի պարտեզ ու մի ջրաղաց։ Բացի այդ բարեգործությունից, նույն Ստեփանոսը՝ «ճամ կորդեց, ոխֆ արար Կեշայ կարմրնջին»,—ասված է նվիրաբերական ուշագրավ այդ արձանագրության մեջ[2]։ «Ճամ» նշանակում է եղկնուտ, ճահճոտ վայր[3], իսկ «կորդել» («կորդ»-անվար, խոպան հողամաս), հավանաբար նշանակել է՝ խամ, խոպան կամ ճահճուտ հողը մշակել, դարձնել օգտագործելի։ Այսպիսով պարզվում է, որ վերը հիշված Ստեփանոսը իրավասու էր ցանկացած ձևով վարվելու ինչպես իր կողմից գնված պարտեզի ու ջրաղացի, այնպես էլ «կորդած»—այսինքն մշակելի դարձրած արտի հետ։

Գյուղական համայնքի ներքին կյանքի ուսումնասիրման տեսակետից ուշագրավ է նաև այդ արտի նվիրաբերման նպատակը։ Այն «ոխֆ» է արվում «Կեշայ գետի կարմրնջին», պայմանով, որ այդ արտի մշակողի վրա դրված լինի կամուրջը շեն պահելու պարտականություն. «ով որ ցանէ՝ զկարմունջ շէն պահէ»,—գրված է այնտեղ[4]։

Մոկքի Ոզմի գյուղի տանուտերերի բարեգործություններ թվարկող XVII դարի մի արձանագրության մեջ, որ գրանցված է Պետ. Մատենադարանի կողմից վերջերս ձեռք բերված մի ավետարանի հատակագրերի վրա, խոսք կա նաև այն մասին, որ տանուտեր Մարտիրոսն ու իր Առաքել եղբայրը «Բ. (2) կճ. (=կապիճ) ցորեն տուին տուին»[5]։ Իսկ 1651 թվականից պահպանված մի արձանագրությունից տեղեկանում ենք կապիճ ու կես ցորենով մի արտի դնման մասին. դնողներն արտի արդյունքը հատկացնում են համայնքին, որպեսզի «տու խանելոյ տարն ուտեն»[6]։

Արդ, եթե առանձին տանուտերեր հող էին տանում համայնքի բոլոր անդամներին շահագրգռող կամուրջը կամ տուն շեն պահելու կամ մաքրելու աշխատանքներին, ապա սառնց վարանման կարելի է ենթադրել, որ այդպիսի նպատակների համար համայնքը ևս իր հողային ֆոնդից կարող էր հատկացնել առանձին վարելահողեր։

Կան բավարար փաստեր այն մասին, որ հայկական վանքերից շատերը XIV—XV դարերում իրենց պատկանող հողերի վրա ստեղծում էին սեփական

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 3850, էջ 99ա։

[2] «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», այուն. 629։

[3] Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 114, 665։

[4] Նույն տեղում։ Հմմտ. նաև «Թորոս աղբար», Բ, էջ 270, ուր մեջ է բերված 1578 թ. մի արձանագրություն ինչ-որ մեկի կողմից սուրբ Գեորգ զորավարի վանքին «զկարմրնճի արա, ճոթով» նվիրաբերվելու մասին։

[5] Պետ. Մատենադարան, ձեռ. № 9660, էջ 1բ։

[6] «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», այուն. 699։

անտեսություններ։ Իսկ հայ և օտարազգի կալվածատերերը ևս ունեցե՞լ են արդյոք այդպիսի անտեսություններ իրենց պատկանող գյուղերում թե՞ ոչ, առայժմ չենք կարող հաստատապես ասել[1]։ Գիտենք ստույգ, որ նրանք իրենց պատկանող գյուղերում ունենում էին զգալի քանակությամբ վարելահողեր, որոնք վարձակալման էին տալիս տվյալ կամ մերձակա գյուղերի բնակիչներին։ Այս մասին ուշադրության արժանի սվյալ կա Բեսավենք գյուղի համայնքի սուրբ Գեորգ վանքի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին XVI դարում գրված մի արձանագրության մեջ, ուր ասված է. «Արարիչն աստուած զԲէսօինից տանուտէրքն աւրհնէ առհասարակ։ Արտ մի ոխ էր տուած այս եկեղեցոյս, յեա ժամանակաց տաճիկ մի գեղի տէր ելաւ և զարան խլեց և արար չարեք հող՝ Աւանի ձեռօք, աստուած չողորմի իւրենց» և այլն[2]։ Մեջ բերված հատվածը մեկնաբանում ենք այսպես. ասիներ առաջ գյուղի տանուտերերի միաբան համաձայնությամբ մի արտ է նվիրված եղել սուրբ Գեորգի վանքին, սակայն դրությունը փոխվել է, երբ գյուղի աեր է դարձել «տաճիկ մի»։ Մահմեդական այս գյուղատերը խլել է գյուղական համայնքին պատկանող, բայց վանքին նվիրաբերված արտը և այն դարձրել «չարեք հող». այլ խոսքով նա սեփականել է այդ արտը, բերքի մեկ քառորդը սահանալու պայմանով վարձակալման հանձնելու համար[3]։

Գյուղական համայնքը տարվա մեջ մի քանի օր պարտավոր է եղել ձրի կոռային աշխատանք կատարել կալվածատիրոջ համար։ Այս մասին XIV—XV դարերից ուղղակի վկայություններ չեն պահպանվել, բայց կան հիշատակություններ հետագա դարերից։

---

[1] Տարսայիճ Օրբելյանի կին Մինախաթուն 1292 թ. Նորավանքին նվիրաբերել է այգիներ. այդ ասթիվ փորագրել տված արձանագրության մեջ նվիրատուն անհրաժեշտ է դալ շեշտելու, որ «այս տուրքս ո՛չ ի գրկանաց, ոչ ի գեղէ, ո՛չ ի պարսնտհողաց, այլ մեր հալալ գրամագին՝ ապա յամէն հարկաց, որ ոչ ում հաշիւ չկայ ի հետ» («Վիմական արձանագիր», էջ 135)։ Հակված ենք կարծելու, որ այստեղ գործածված «պարոնտհող» տերմինի տակ պետք է հասկանալ հենց այն հողաբաժինը, որ կալվածատերերը յուրացնում էին, կարելով գյուղական համայնքի հողային ֆոնդից։

[2] Պետ. մատենադարան, ձեռ. № 9223, ԺԷ, էջ 1բ։

[3] «Չարեք» տերմինը գործածական է եղել հարևան Ադրբեջանում մինչև XIX դարը։ Ադրբեջանի միջնադարյան պատմության հմուտ մասնագետ Ա. Ալի-Զադեի տվյալներով „Чахар-йек (=չարեկ) платили малоземельные крестьяне, отдававшие землевладельцу одну четвертую часть годового дохода“ (տե՛ս *А. А. Али-Заде*, Социально экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, էջ 239)։ Բերված փաստաթուղթը կարելի է մեկնաբանել նաև ուրիշ ձևով, եթե «չարեք հող» տերմինը այլ կերպ հասկացվի։ Հայտնի է, որ համփա-չարեքային հողաբաժանման սիստեմով՝ գյուղական համայնքի հողերը բաժանվում էին համփաների, չարեքների, պճեղների և այլ մասերի և հատկացվում գյուղական համայնքի դերդաստաններին, նրանց շնչաքանակի համապատասխան։ Չարեք հող (այսինքն՝ համփաի մեկ քառորդի չափով հող) ստանում էին չորս շնչից բաղկացած ընտանիքները։

Արդ, եթե այս փաստաթղթի մեջ «չարեք հող» գործածվել է հենց այդ իմաստով, ապա պետք է ենթադրել, որ գյուղի մահմեդական աերը խլել է համայնքի կողմից եկեղեցուն նվիրաբերված արաը և այն հանձնել օգտագործման (որպես «չարեք հող») Բեսավենք գյուղի բնակիչ Ավանին, որի դրդմամբ կամ խնդրանքով էլ կատարվել է այդ գրավումը։

Այդ բացատրությամբ Բեսավենք գյուղի տանուտերերի անունից շարադրված փաստաթուղթը, պահպանած լինելով վկայություն համփա-չարեքային հողաբաժանման ձևի մասին, արժեքավորվում է այլ առումով։

Այսպես, օրինակ, Տաթևի վանքում հին տրադիցիաների հիման վրա XVII դարում կազմված՝ «Հուլավարն, այսինքն վանքական գիւղօրէից հողոց տասանորդքն» մեծարժեք ցուցակում, վանքապատկան Տաթև, Սվարանց, Աղանց, Տանձասատ և մյուս գյուղերի կալվածատիրոջ (տվյալ դեպքում՝ վանքի) նկատմամբ ունեցած պարտավորությունների շարքում, ամեն անգամ նշվում է նաև հետևյալը. «գլխավին, բոլոր դեղովն» պարտավոր ես ամեն տարի, առանց վարձատրության «մէկ օր վարեն, Բ. (կամ Գ.) օր հունձ անեն, և մէկ օր ալ ջաղ անեն ինչ բան որ լինի, և մէկ օր եզնարածքն վանքիս համար խոտ հարեն»[1]։

Չպետք է զարմանալ, որ համանման պարտավորություններ իրենց կալվածատերերի նկատմամբ, եթե միայն սրանք վարել են ինքնուրույն տնտեսություն, ունեցել են բոլոր գյուղական համայնքները — «գլխավին, բոլոր դեղովն»։

Համայնքի անդամները կալվածատերերի նկատմամբ ունեցել են նաև այլ պարտավորություններ։ Ուշ դարերից մեզ հայտնի ազգագրական նյութերը հնարավորություն են տալիս ենթադրելու, որ կալվածատերերը իրենց գյուղերի շինականներին հանձնել են անվճար խնամելու մանր ու խոշոր եղջյուրավոր անասուններ, ինչպես նաև տնային թռչուններ։ Այս մասին կա նույնիսկ մատենագրական մի ավյալ քննության ենթակա ժամանակաշրջանից։

Գրիգոր Նարեկացու ընդարձակ վարքում, որ մուտք է գործել Գրիգոր Ծերենցի (մահ. 1425 թ.) խմբագրած Հայսմավուրքի մեջ, Նարեկ գյուղի քուրդ տիրոջ մասին ասված է, որ նա «հաւ մի... յիւր շինականն ետ թուխս դնել»։ Թխսկան հավն իր ճուտերով, զժրախտ պատահարով, ընկնում է երկանաքարի տակ և սատկում. «իսկ այն կինն, որ զհաւն ի թուխս եդեալ էր, ահաբեկ եղեալ յահէ քրդոյն՝ յուսացաւ յաստուած և յաղօթս սրբոյն Գրիգորի»։ Եվ, իրոք, Գրիգոր Նարեկացու ձաղահարույց զորությամբ ջախջախված հավն իր ճուտերով կրկին կենդանանում է, խեղճ ու ահաբեկված շինական կնոջն աղատելով քուրդ բեկի բարկությունից[2]։

Այսպիսով, որքան էլ աղքատիկ ու ակնարկային են մեր օգտագործած նյութերը, նրանք հնարավորություն են տալիս մասամբ որոշելու կալվածատերերի նկատմամբ գյուղական համայնքի անդամների ունեցած պարտավորությունները և, որ շատ կարևոր է, պարզում են, որ XIV—XV դարերում գյուղական հողատարածությունները հիմնականում, ինչպես նշեցինք, բաժանված են եղել հետևյալ կատեգորիաների՝ ա) հողաբաժանման ենթակա համայնքապատկան վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր և այլն, բ) տարբեր ճանապարհներով մասնավոր սեփականություն («հայրենիք», «մուլք») դարձած այգիներ, պարտեզներ, վարելահողեր, գ) գյուղատերերի կողմից սեփականված վարելահողեր, որոնք տրվում էին վարձակալման, դ) վանական հաստատություններին նվիրաբերված հողակտորներ և, վերջապես, ե) անմշակ, խոպան ու ճահճուտ հողային տարածություններ։

Գյուղական համայնքը Հայաստանում ու հարևան երկրներում շերտավորման իր ենթարկված մեկ հետաքրքրող ժամանակաշրջանից դարեր առաջ։ Դեռևս V դարից տվյալ ունենք այն մասին, որ գյուղական բնակչությունը

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 6271, էջ 678

[2] «Գիրք որ կոչի Այսմաւուրք», 1730, էջ 395։

տնտեսական ու սոցիալական իր դասավիճակով շերտավորված էր 3 խմբերի՝ թվանիկների, տառապյալների և վար ու այգի չունեցողների։ Թվանիկներից եկեղեցին հարկի դիմաց դանձում էր պտուղ՝ 4 դրիվ ցորեն, 6 դրիվ գարի և 16 փաս քաղցու, «տառապյալները» տալիս էին հացի կեսը և գինի՝ որքան կարողանային, իսկ «որոյ վար և այգի ոչ է» ազատվում էին պտղի վճարելուց[1]։

XV դարում, անշուշտ, համայնքի շերտավորման պրոցեսն ավելի էր խորացել, և բազմաթիվ ավյալներից դատելով, հարուստ ու փարթամ գերդաստանների կողքին, կային ընտանիքներ, որոնք անկարող էին սեփական միջոցներով զբաղվել վարուցանքով։

Հիշատակարանների ու կալվածքների օտարման մասին շարադրված փաստաթղթերի մեջ, երբ հարկ է լինում խոսել գյուղական որևէ համայնքի բոլոր անդամների մասին, հաճախ դանում ենք այսպիսի արտահայտություններ՝ «թէ մեծ է և թէ փոքր, թէ հարուստ է և թէ աղքատ, թէ բնական է և թէ նորէկեց»[2]։

Գյուղական հարուստ գերդաստանների, նրանց տնտեսական ու սոցիալական դիրքի մասին վերը բերված տվյալները համարելով բավարար, փորձենք անհամեմատ շատ ավելի սուղ տվյալներով փոքր ինչ լուսաբանել աղքատ գերդաստանների տնտեսական ու իրավական վիճակին առնչվող որոշ հարցեր։

Համայնքից սատացած վարելահողը ինքնաբավ միջոցներով մշակել անկարող գյուղական ընտանիքներից մի քանիսը միանալով կազմում էին հարակաշություններ կամ հազկիցների ընկերություններ։ Նրանք փոխադարձ համաձայնությամբ երկրագործական աշխատանքների (վար, հունձ) ամիսներին, միացնում էին իրենց անասուններն ու գյուղատնտեսական գործիքները և հերթով վարում, ցանում, հնձում ու կալսում կամավոր սկզբունքներով կազմված ժամանակավոր այդ ընկերությունների մեջ մտած անդամների արտերը։

Հարակաշության մասին տվյալ է հիշատակում Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» Բ մասի ՃԻԱ հոդվածում, որը կրում է «Յաղագս դատաստանաց այգեղործաց, ընկերաւոր մասնաւորաց հարակշաց և վարձկանաց» խորագիրը։

Նշելով, որ տարբեր գավառներում գոյություն ունեն տարբեր սովորություններ ու տրադիցիաներ, Գոշը թեև դժվարանում է առաջարկել համընդհանուր ու պարտադիր կանոններ, որոնք կիրառելի լինեին ամենուրեք «ընկերաւոր մասնաւորաց հարակշաց» միջև ծագող վեճերի ժամանակ, բայց և այնպես սահմանում է հետևյալը՝ «Մի ոք անիրաւութեամբ զրկանս ինչ գործիցէ, այլ իրաւամբք զբաժանումն արասցէ ընդ ընկերին։ Եսկ զող գտեալ ոք ի նոսա կրկին տուգանեսցի և ոչ չորեքկին ըստ օրինացն, զի յիւր վաստակն և ոչ յօտարին աւիրէ»[3]։

---

[1] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Ազուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 66. «Սահմանագրութիւն կանոնական ի Վաչականայ Ազուանից արքայի, եղեալ ի ժողովն, որ յԱզուէնն եղև»։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 4883, էջ 614բ։

[3] Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, հրտ. Վ. Բասմաջյանի, Վաղարշապատ, 1880, էջ 432—433։

Այդպիսի հարակաշներ էին դարձել հայ ժողովրդական առակներից մեկում աղվեսն ու խեցգետինը. «Ագուէսն ու խեչափառն բարեկամացան մէկ մէկի և եղան եղբարք և սկսան և արին ցանք ի միասին և ի ժամ հնձելոյ աշխատեցան ի մէկ, որպէս աւրէն է հողագործաց»,— ասված է առակում։ Ցորենի շեղջը կուտելուց հետո աղվեսը մտադրվում է նենգել իր ընկերոջն ու բերքի երկու-երրորդը վերցնել իրեն. «Նախնայն և ի գեղչիս տանուտէրքն պատեհ են տեսել, որ դու մին բաժին առնուս և ես երկուս»,— ասում է նա խեցգետնին։ Սակայն վերջինս հնարագետ խորամանկությամբ կարողանում է մեծ բաժինն ինքը ստանալ[1]։

Այս նույն հարցի լուսաբանման առնչությամբ ոչ պակաս նշանակություն ունեն Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի կանոնական խրատները, առաքված Արևելյան Հայաստան 1251 թվականին։ Այդ նորտհայտ կանոնական խրատների նախավերջին կանոնը ազգագրական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Այնտեղ ասված է. «Ի զրկանաց և ի խաբելոյ պատարաստ կայցեն քրիստոնեայքն և ի նենգելոյ զիրեարս՝ արք և կանայք, հաղկիցք, և խաղկիցք, և զինուորակիցք, և արուեստակիցք, գնաւոք և վաճառաւոք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով, զինքն հոգւով զրկէ և յաւիտենական կենաւքն»[2]։

Կաթողիկոսն, այսպիսով, զգուշացնում է իր հոտին, որ հանդերձյալ կյանքում մեծ պատժի են արժանանալու բոլոր նրանք, ովքեր այս կյանքում կզրկեն, կխաբեն ու կնենգեն իրենց ընկերներին։ Արվեստակիցների, այսինքն միևնույն արհեստով զբաղվող և համքարության մեջ ընդգրկված արհեստավորների, զինվորակիցների, գնողների ու վաճառողների հետ միասին՝ կանոնի մեջ հիշատակվում են նաև «հաղկիցք» և «խաղկիցք» մեկնության կարոտ տերմինները։

Հայ բարբառներում պահվել է «հախկ» բառը՝ «ընկերակից գութանավորներից ամեն մեկին ընկած վարելու հողի բաժին» իմաստով[3]։ Այսպիսով, պարզ է, որ «հաղկիցք» էին կոչվում ընկերակիցների այն կամավոր խմբերի անդամները, որոնք միավորվում էին վարուցանքի, թերևս նաև հունձի ու կալսման աշխատանքները միասնական ուժերով, լծկան անասուններով ու գործիքներով կատարելու համար։ Հասկանալի է, որ այդ կարգի խմբերի մեջ կարող էին ընդգրկվել միայն գյուղական այն ընտանիքները, որոնք առանձին-առանձին վերցրած անկարող էին մշակել իրենց հողաբաժինները։

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նույն կանոնի մեջ հիշատակված «խաղկիցք» տերմինը։

Գյուղերում կային շատ ընտանիքներ, որոնք ունեին աննշան թվով կաթնատու անասուններ (կով, ոչխար, այծ)։ Օրվա ընթացքում ստացած կաթի չնչին քանակով նրանք գրկված պետք է լինեին յուղ ու պանիր պատրաստելու հնարավորությունից։ Սակայն հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր արտադրական կենցաղում մշակել էր այդ դրությունից դուրս գալու ուշագրավ մի եղանակ՝ կաթ փոխ տալու միջոցով։ Նույն վիճակի մեջ գտնվող մի քանի գյու-

---

[1] Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ. մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 37։

[2] Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի ձեռագրական բաժին, հայկ. ձեռագրերի ֆոնդ, նոր դարք № 37, էջ 214բ։

[3] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, III, էջ 12։

ղական ընտանիքներ փոխադարձ համաձայնության գալով, պայմանավորվում էին օրվա ընթացքում իրենց ստացած կաթը որոշ չափով—ամանով հերթով տալ այդ խմբի մեջ մտած ընտանիքներից մեկին։ Այս ճանապարհով, խմբի մեջ մտած յուրաքանչյուր ընտանիք հնարավորություն էր ձեռք բերում իր կաթից յուղ ու պանիր պատրաստելու։ Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, թուրքերեն լեզվով կոչվում էր «ղաբ» կամ «խաբ»—«խապ»[1], այստեղից էլ «խապկիցք» տերմինը, որի տակ հասկացվում էր փոխօգնության այդ խմբի մեջ մտած գյուղացիներից յուրաքանչյուրը։ Հայ ժողովրդական առակներից մեկում պահպանված է կարևոր վկայություն ասը այծ ունեցող մի այրի կնոջ մասին, որը լինելով «խապկից» «յամէն օր շերեփ մի ջուր լնոյր ի կաթն և ի խափ (վարիանտ՝ իապ, խար) տայր»։ Իր այծարած որդու «է՞ր առնես զայդ վնասդ» հարցին մայրը տալիս է ոպարիչ պատասխան. «Որդի, մեր կաթնս քիչ է՝ այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն, որ մեզ ձմռանս թացան լինի»[2]։

Հաղկիցների ու խապկիցների խմբերի մեջ կարող էին միավորվել այն ընտանիքները, որոնք իսպառ չէին զրկվել սեփական անտեսությունը վարելու համար անհրաժեշտ արտադրական միջոցներից։

Գյուղական համայնքներում, սակայն, կային նաև այնպիսի ընտանիքներ, որոնք ինքնուրույն տնտեսություն կամ բնավ չունեին, կամ էլ ունեին այնպիսի մանր, գաճաճային տնտեսություն, որի արդյունքով անկարող էին կերակրվել։ Այդպիսի ընտանիքներից էին դուրս գալիս վարձկաններն ու մշակները, որոնք վարձվում էին հարուստ համագյուղացիների կողմից երկրագործական սեզոնային աշխատանքների (վար, հունձ և այլն) շրջանում, ինչպես նաև դառնում էին հովիվներ ու վարձկան ջրաղացպաններ[3] գյուղերում և «գործավորներ» (տնտես, մաճկալ, հովիվ, իշվար, ջրբեր, փայտակոտոր և այլն)՝ վանական հաստատություններում։

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ձեռագրերից մեկում, Բ. մասի ՃԻԱ հոդվածի մեջ ծանոթ վերնագիրը խմբագրված է այսպես. «վասն որ մարապան մտեն և մշակ այլ մարդոյ»։

«Մարապայ» տերմինը ըստ Ստ. Մալխասյանցի, նշանակում է «երկրագործ, որ նստած է կալվածատիրոջ հողի վրա ու մշակում է այդ հողը, որոշ պարտականություններ կատարելով հօգուտ կալվածատիրոջ»[4]։ Այս բացատրությունը ճշգման ու լրացման կարիք ունի։ Մխ. Գոշի վերոհիշյալ հոդվածի խորագրում ասված է, որ մարապան կամ մշակը վարձվում է, «այլ մարդոյ» կողմից, իսկ մեկ հետաքրքրող ժամանակաշրջանում կամ Գոշի հոդվածի միջնադարյան խմբագրի ժամանակ «այլ մարդ» կարող էր լինել ինչպես կալվածատերը, այնպես էլ գյուղական փարթամ ու ընչեղ գերդաստանի տանուտերը։ Ավելին, եթե մշակը ամենայն հավանականությամբ աշխատում էր իրեն վարձողի հողի վրա, ապա հիմք չունենք պնդելու, որ նույն փոխհարաբերությունը

---

[1] Հ. Աճառյան, Արմատական բառարան, III, էջ 303—304։

[2] Ղ. Մաս, նշվ. աշխատություն, էջ 238—239։

[3] Վարձկան ջրաղացպան էր, օրինակ, Դավիթ Ծարեցին։ Սա, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, լինելով «ի տքաւորաց և ի անանկաց, պահէր զչրաղաղս սոյա (ծարեցւոց), և յայնմանէ կերակրէր ինքն և էնն իւր և որդիքդ» (Կ. Գանձակեցի, Պատմ. Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 307)։

[4] Հայերեն բացատրական բառարան, III, էջ 271։

գոյություն ուներ վարձողի ու մարապայի միջև։ Բացառված չէ, որ վերջինս կարող էր աշխատել իր հողամասի վրա, բայց ուրիշի քաշող անասուններով ու սերմացուով։ Պնդել, որ մեծատուն տանուտերերից տնտեսական այդպիսի կախման մեջ ընկած գյուղացիներն էին հենց, որ կոչվում էին «մարապայ»— չենք կարող, սակայն այդ կարգի հարաբերությունների գոյությունը հավաստող տվյալներ կան։

Այսպես, 1503 թվականին, Նորընծա ոմն Հովհաննես երեց, Սթունի գյուղի բնակիչ Ճֆլայր անվամբ մեկին տալիս է երեք եզ, և նույնքան եզ էլ՝ Ճոեոր գյուղի բնակիչ Խալիֆին։ Այս երկուսը պարտավորվում են Հովհաննես երեցի տված սերմերով ցանել իրենց հողակտորները, պայմանով, որ տարին 85 լիտր ձեթի գին ուղարկեն Երուսաղեմ, Հովհաննես երեցի և նրա մերձավորների հիշատակին։

Ստորև մեջ ենք բերում այդ պայմանագրի կարևոր մասը. «Ի թվայբերութեանս Հայոց ՉԾԲ. (1503), ես Նորընծայ Յովհանէս երէցս որ յիշատակ գրի իմ հոգուս և ամենայն արեան մերձաւորացն իմոց։ Տվել եմ Գ. (3) եզն ի Ճֆլայուն որդին Սամգանայ, ի գեղն որ կոչի Սթունի. Գ. (3) եզն այլ՝ (ի գեղն) որ կոչի Ճոեոի, ի Խալիֆէն, որ վարեն զգետինքն իմ ցորենաւն ու իմ գարովն, ոսբամբ ու շուշմայով, ու ալ զինչ որ լինի...։ Եւ զինչ որ աստուած տայ՝ ամէն տարի... ՁԵ. (85) լտեր գին յուղարկեն ի սուրբ Երուսաղէմ, ու զայլն աղքատացն և ուխտաւորացն բաժանեն...»[1]։

Նման բովանդակությամբ պահպանված այս միակ պայմանագիրը գրանցվել ու հասել է մեզ, որովհետև գործարքը բարեգործական բնույթ ունի։ Իրենց հողը ուրիշի լծկանով ու սերմացուով մշակող գյուղացիները, տվյալ դեպքում, պարտավորվում են բերքի մի մասը ոչ թե լծկան անասունների ու սերմացուի տիրոջը՝ Հովհաննես երեցին հանձնել, այլ վերջինիս հոգու փրկության համար ուղարկում են Երուսաղեմի եկեղեցիներին։ Սակայն պայմանագրի պատմական արժեքը սրանով բնավ չի նվազում։ Այդ փաստաթղթի հիման վրա կարելի է վստահորեն եզրակացնել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայկական գյուղերի ունևոր վերնախավը (տանուտերեր, քահանաներ և այլն) շահագործում էր արտադրության միջոցների մի մասից զրկված գյուղացիներին, տալով նրանց լծկան անասուններ ու սերմացու և ստանալով նրա՛նց հողակտորների վրա, նրա՛նց ջանքերով ու քրտինքով ստեղծված բերքի զգալի մասը։

Առկա սուղ հնարավորությունների սահմաններում ցույց տալով գյուղական համայնքի անդամների միջև առաջացած շերտավորումը, անհրաժեշտ ենք համարում շոշափել նաև հետևյալ կարևոր հարցը. արդյո՞ք որևէ գյուղում բնակություն հաստատած բոլոր անձինք կամ ընտանիքներն էին համարվում տվյալ գյուղական համայնքի լիիրավ անդամներ, թե՞ կային այնպիսի գյուղացիներ, որոնք իրավազուրկ էին կամ չէին օգտվում համայնքի անդամների բոլոր իրավունքներից։

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ տվյալներ առայժմ չունենք, սակայն սկզբնաղբյուրներում կան որոշ ակնարկներ, որոնք աղոտ լույս են սփռում գյուղական համայնքի կյանքի այս կողմի վրա։

Մարմեռ գյուղի մասին շարադրված մեզ ծանոթ հիշատակարանում կան այսպիսի տողեր. «...և այլք, որ անուանքն ի միտս չի դար, թէ մեծ է և թէ փոքր,

[1] Օքսֆորդ, Բոդլյան գրատուն, Ms. Marsh. 438 (I—III). (տե՛ս Պետ. Մատենադարան, Անհատական արխիվներ, թղթ. 122, էջ 2007)։

թէ հարուստ է և թէ աղքատ, թէ բնական է և թէ նորէկեց, ամենեքեան՝ մեծ և փոքր»[1]։

Ինչպես տեսնում ենք այստեղ հայադրված են միմյանց գյուղում բնակվող անձինք ըստ իրենց սոցիալական (մեծ և փոքր) և տնտեսական (հարուստ և աղքատ) դոյավիճակի։ Սակայն կա նաև մի այլ հատկանիշ, որով տարբերակվել են գյուղի բնակիչները. հիշատակագիրը տարբեր կտրգի բնակիչ է համարում «բնական»-ներին, այսինքն՝ գյուղի բուն բնակիչներին և «նորեկեց»-ներին, այսինքն՝ այլ վայրերից տվյալ գյուղը եկած ու բնակություն հաստատած անձանց։

Որ գյուղական բնակչության այս երկու կատեգորիաների միջև եղել է իրավական ու սոցիալական ինչ-որ տարբերակում՝ այդ երևում է նաև Մատթեոս Ջուղայեցու «Վասն քարոզութեան բանի» աշխատության մի հատվածից, որտեղ հեղինակը ցանկանում է ցույց տալ, թե «բարկութեան գևր» մարդկանց նեռում է հաճախ տարբեր որոդայթների մեջ։ Որոդայթներից մեկն էլ համարվում է հետևյալը. «Ասէ գևն (բարկութեան) մի համբերեր գոցա, զի նոքա օտար են և եկք և գու բնիկ. հայրենիքս քո է և գոքա առ քեզ են եկեալ և ոչ գու առ նոսա. և գոքա զքո ապրանքդ կուտեն ու քեզ վնաս ասեն։ Արդ, վարեա՛ զնոսա»[2]։

Ինչքան էլ անորոշ համարվեն մեր հեղինակի խոսքերը, այնուամենայնիվ, կարծում ենք, նրանք հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ «բնիկ» գյուղացիները, այլ խոսքով համայնքի լիիրավ անդամները՝ «նորեկեց»-ներին չէին համարում համահավասար իրավունքներով օժտված։ Նրանց պատկերացմամբ այդ նորեկեցները «իրենց ապրանքն են ուտում», ուստի և իրենք (բարկության գևի դրդումով) իրավասու են նույնիսկ նրանց վռնդելու գյուղից («Արդ, վարեա՛ զնոսա»)։

Կարելի է հուսալ, որ հայերեն ձեռագրերի հետագա խուզարկումներով երևան կբերվեն բնիկների և նորեկեցների մասին նոր տվյալներ։

XIV—XV դարերի գյուղական համայնքի պատկերը հնարավորին չափ ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում համառոտակի ցույց տալ, թե գյուղացին, բացի պետական, կալվածատիրական ու եկեղեցական հարկերից (որոնց մասին այս հոդվածում խոսելը մեզ շատ կհեռացներ բուն նյութից), ի՞նչ հարկեր ու աուրքեր էր վճարում գյուղական պաշտոնեությանը՝ ձեռնավորին, ոեսին, զզրին և այլն։

Այս մասին քննության ենթակա շրջանից կամ նրան ժամանակամերձ դարերից կան ձեռագրական որոշ ակնարկներ։

Այսպես, 1288 թվականին, Սահմադինի և նրա որդիների պարոնության ժամանակ Օշականում փորագրված մի արձանագրությունից պարզվում է, որ Գեշմարդ ամիրան և Հավիկ ձեռնավորը սուրբ Կարապետի վանքի՝ Օշականում և Մրենում ունեցած այդիներն ազատել են ձեռնավորի հարկից. «Թողաք... զձեռնաւորին հարկն զինչ որ կայր»,— գրում են նրանք[3]։

1313 թվականին Տայքում գտնվող Վիկա գյուղի տանուտեր Դավիթը պարտավորվում է գյուղից դուրս հարս առնելու դեպքում նախկինում գանձ-

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 4883, էջ 614ա։

[2] Նույն աեղում, ձեռ. № 6607, էջ 47բ։

[3] «Կնոջական տարեգիր», էջ 130։

վող 12 ստակ դրամի դիմաց՝ վերցնել 6 ստակ («...հարս տանի՝ ԺԲ. սակէն Զ. թողել է, Զ. կառնում»,—գրված է այդ առթիվ կազմված հիշատակարանում)[1]։

XV դարի անթվական մի արձանագրության տվյալներով Մթայ գյուղի ոես Սաեփանոսը հրաժարվում է գանձելուց «զաղչկան յաղկն» կոչվող տուրքը[2]։ Ըստ երևույթին այս տերմինի տակ ևս պետք է հասկանալ գյուղից աղջիկ տուսնտցնելու ժամանակ ոեսին տրվող տուրքը, որի մասին ակնարկ կա նաև XVII դարի անթվական մի արձանագրության մեջ։ Վերջինս պահպանվել է խիստ վնասված վիճակում (բոլոր տողերի վերջին բառերը ընկել են), բայց, այնուամենայնիվ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում[3]։

Արձանագրության սկզբում փառաբանական խոսքեր են ուղղված «Սկմայ տանուաէրացն» հասցեին, «որ չար (բաղ)ադաթ կայր ի վերայ դեղին՝ թողին», ապա թվարկվում են այդ «չար բաղադաթները» (նորահնար պահանջմունք, հարկ), որոնց մեծ մասը տողերի վնասված լինելու պատճառով չեն հասկացվում։

Արձանագրության մեջ ընթերցվում են նաև այսպիսի տողեր. «Աստուած ող(որ)մի Թումին, որ գլուխն ԸԶ. (՞) կորեկ եթո(ղ), զիարանեց դրամն արար Բ. շաւի»։ Ապա հիշատակված է մի այլ տանուտեր, որ «զմատղու վարձն եթող», երկրորդը՝ որ «զսուկն արար Գ. ամիսանի»։ «Սուկ» նշանակում է ջրաղացի խողովակ, նավ, ուստի կարելի է ենթադրել, որ այստեղ խոսքը ջրաղացներից գանձվող ինչ-որ տուրքի մասին է։ Տանուտերերից մեկ ուրիշը, ասված է նույն արձանագրության մեջ, «տուն մի մանած ու գուրպէ մի եթող». պետք է ենթադրել, ուրեմն, որ յուրաքանչյուր գյուղական ընտանիք պարտավոր է եղել որոշ քանակությամբ մանած թել և գուլպա տալ տանուտերին և այլն։

1596 թվականի մի հիշատակարանից տեղեկանում ենք «ալըղան» կամ «ալեղան» կոչվող ինչ-որ տուրքի գոյության մասին։ Հիշատակարանում ասված է, որ Բասդ գյուղում «ամէն տուն չափ մի ցորեն կու տային ի յըոէսն ալեղան», բայց Կակոս անունով մեկը, դառնալով ոես և «զմտաւ ածեալ զօր մահուն և վերկիւղն առաւածոյ՝ վերուց զայն չար դարալն ի գեղջէն»[4]։

Գյուղական համայնքի ներքին կյանքին վերաբերող այս մանր տուրքերի մասին մեր գիտցածը շատ քիչ է։ Առայժմ դժվար է ասել նույնիսկ, թե այդ բոլոր տուրքերը յուրացնում էին ոեսներն ու ձեռնավորները։

Եվ միանգամայն հնարավոր է ենթադրել, որ դրանց գոնե մի մասը, այլևայլ ճանապարհներով, դարձյալ մուտք էր գործում պետական պաշտոնյաների ու ֆեոդալ տերերի գրպանները։

XIV—XV դարերի գյուղական համայնքի կազմակերպության ու պաշտոնեության, հողային ֆոնդի անօրինման, դասային կառուցվածքի, արտադրական կենցաղի և հարակից հարցերի մասին մեզ մատչելի տվյալները, անշուշտ, հնարավորություն չեն ընձեռում լուսաբանելու համայնքի բարդ կյանքի բոլոր կարևոր կողմերը։ Այնուամենայնիվ, ստացված արդյունքը,

---

[1] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 95։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 4814, էջ 129ա։

[3] Նույն տեղում, ձեռ. № 9660, էջ 1բ։

[4] Ա. Սիրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի, առաջին հատոր, 1948, էջ 358—359։

կարծում ենք, գոհացուցիչ է և հույս է ներշնչում, որ աշխարհով մեկ ցրված հայերեն ձեռագրերի մեջ առկա բոլոր նյութերի օգտագործմամբ հնարավոր կլինի ավելի լրիվ ու ամբողջական պարզաբանել հայ գյուղացիության պատմության կարևորագույն հարցերից մեկը՝ միջնադարյան գյուղական համայնքի հարցը։

ОБ АРМЯНСКОЙ СЕЛЬСКОЙ ОБЩИНЕ В XIV—XV вв.

Л. С. ХАЧИКЯН

(Резюме)

В своей статье автор говорит о сельской общине средневековой Армении, категориях ее земельных фондов и формах их использования, имущественном расслоении крестьянства и его социально-экономическом положении.

В армянских источниках XIV—XV веков сельская община обозначается термином **жоговурд** (народ). Во всех сельских общинах существовали должностные лица, называвшиеся **дзернавор.** Являясь на селе представителями феодала, дзернаворы облагали податями пахотные земли, пастбища и другое недвижимое и движимое имущество, принадлежавшее сельской общине и отдельным семьям. Они же следили за поступлением податей.

Интересы сельской общины защищал перед феодалом или государством **раис** или **рес** — должностное лицо, избиравшееся **танутерами** (домовладыками) из представителей самых богатых и влиятельных семейств. Имеются данные, указывающие, что существовала тенденция превратить должность раиса в наследственную.

Рамки деятельности раиса были довольно обширны. Переделы земли, проведение оросительных канав, проселочных дорог, строительство мостов и надзор за их сохранностью, распределение податей,—все это производилось под руководством раиса.

Пользуясь своим положением и властью, раисы имели возможность производить с односельчан поборы и даже собирать в свою пользу определенный налог.

В хозяйственной и административной жизни сельской общины играрали большую роль танутеры,—так назывались главы обеспеченных, влиятельных семейств. Принадлежавший сельской общине тот или иной земельный участок отчуждался лишь с согласия танутеров.

Земельная площадь, принадлежавшая сельской общине, еще в XIV—XV веках была подразделена на ряд видов: 1) пахотные земли, принадлежавшие сельской общине и подлежавшие переделу (пахотные земли распределялись среди крестьянских семейств, по-видимому, по **ампа-чарекской** системе, по которой земля распределялась по количеству душ в семье); 2) перешедшие в собственность пахотные участки, сады и виноградники, отчуждение и купля-продажа коих производилась лишь с согласия членов тех семей, **мулком** или **айреником** коих являлась данная недвижимость; были села, значительная часть земельного фонда которых уже стала собственностью той или иной семьи, состоявшей в сельской общине; 3) скалистые и болотистые земли или земли, по какой-либо другой причине ставшие непригодными для сельскохозяйственных работ; они могли стать собственностью той или иной семьи, если бы

последние, вложив в них средства, могли превратить их в пригодные; 4) земельные участки, принадлежавшие владельцам сел и сдававшиеся в аренду с условием получения четверти урожая; 5) земельные участки, пожертвованные монастырским учреждениям.

В Армении и в соседних странах сельская община подверглась расслоению за много веков до рассматриваемого в статье периода. Процесс расслоения сельской общины в XIV—XV веках углубился еще больше. Судя по многочисленным данным, наряду с богатыми и влиятельными семьями были семьи, которые не имели возможности производить пахоту и сев собственными средствами. Семьи, не имевшие возможности самостоятельно обрабатывать пахотную землю, полученную от сельской общины соответственно количеству душ, соединившись, составляли **аракашества** или временные товарищества **ахкицев.** Соединив свой тягловый скот и сельскохозяйственные орудия, они по очереди пахали, сеяли и косили нивы, принадлежавшие членам временных товариществ. С целью изготовления масла и сыра на основе взаимопомощи, такие же товарищества составляли крестьянские семьи, имевшие небольшое количество молочного скота.

Крестьяне, вовсе не имевшие собственного хозяйства или имевшие очень небольшое хозяйство, во время сезонных сельскохозяйственных работ служили в качестве наемных рабочих в хозяйствах своих богатых односельчан. Из этой же социальной прослойки выходили сельские пастухи, наемные мельники, заведующие хозяйством монастырей, пахари, погонщики ослов и прочие.

В рукописных источниках имеются определенные намеки, которые дают автору основание заключить, что существовала какая-то разница между членами сельской общины — «коренными» крестьянами и поселившимися в данном селе «пришельцами» из других мест. Последние не имели тех прав, которыми обладали «коренные» крестьяне.

В конце статьи показаны те подати и налоги, которые взимались в пользу сельских должностных лиц—раисов и дзернаворов.

Имеющиеся налицо данные об организации армянской сельской общины XIV—XV веков, о ее администрации, порядке распределения земельного фонда, имущественном расслоении, производственно-бытовых отношениях не позволяют осветить с достаточной полнотой все стороны ее сложной жизни. В будущем, с выявлением новых рукописных материалов, станет возможным более полно изучить один из важных вопросов истории армянского крестьянства — вопрос о средневековой сельской общине.